կամեցայ սիրել զԱրշակ արքայ Հայոց, եւ նա համակ անարգեաց զիս: *3* Եւ ե-
դի ընդ նմա ուխտ խաղաղութեան, եւ երդուաւ ինձ յիւրեանց աւրէնս քրիս-
տոնէութեանն ի գլխաւորութիւն այնմ՝ զոր Աւետարանն կոչեն. նախ այն
երդմանն ստեաց: *4* Ես նմա բիւր բարիս խորհեցայ որպէս հայր որդւոյ կա-
տարել նմա, եւ նա ինձ չար ընդ բարւոյ հատոյց: *5* Իսկ ես կոչեցի զերիցուս
եկեղեցոյն Տիսփոնի քաղաքի, եւ կարծեցի թէ նոքա նենգութեամբ ինչ ե-
տուն նմա զերդումն եւ ետուն ինձ ստել: *6* Եւ պատուհասեալ զնոսա որպէս
զմահապարտս, իսկ ասաց ցիս Մարի երէց գլխաւորն նոցա, ասէին՝ թէ մեք
արդարութեամբ տուաք նմա զերդումն. բայց եթէ նա ստեաց, նոյն
Աւետարանն ածէ զնա առ ոտս ձեր: *7* Եւ ես նոցա ոչ լուայ. եւ ետու հրաման
եւթանասուն զնոսա ի մի գուբ փողոտել, եւ զուսումնակիցս նոցա հանել ընդ
սուր: *8* ԶԱւետարանն՝ յոր երդուաւ Արշակ արքայ, որ է գլխաւորութիւն ուս-
մանց նոցա քրիստոնէութեանն, կապեցի շղթայիւք, եւ կայ ի գանձի իմում:
9 Բայց բանքն Մարեայ երիցոյ ուշ եղեն ինձ. եւ յիշեցի զի ասէր՝ թէ մի՛ սպա-
նաներ զմեզ, այլ ես գիտեմ՝ զի նոյն Աւետարանն ածէ զԱրշակ արքայ ի
ծունկս քո: *10* Ահաւասիկ բանք արդարութեամբ կատարեցան, զոր ասէրն[1]:
11 Բայց Արշակ արքայ Հայոց այս երեսուն ամ է Արեաց՝ զի ետուն ընդ նմա
ճակատս, եւ յաղթել եւ ոչ մի ամ ոչ կարացաք. եւ ելեալ է եկեալ ոտիւք իւ-
րովք: *12* Բայց թէ գիտէի՝ թէ յայսմ հետէ կայցէ յուխտին իմում եւ ի հնազան-
դութեան բարեաւ ուխտիւ, մեծապէս մեծարանաւք արձակէի զնա խաղա-
ղութեամբ յիւր աշխարհն:

13 Իսկ քաւդեայքն ետուն նմա պատասխանի եւ ասեն. Թող մեզ այսաւր,
եւ վաղիւն պատասխանի արասցուք քեզ: *14* Իսկ ի վաղիւ անդր ժողովեցան
եկին ամենայն քաւդեայքն եւ աստեղագէտքն, եւ ասեն ցարքայն. Այժմ զի ե-
կեալ է առ քեզ թագաւորն Հայոց Արշակ, զիա՞րդ խաւսի ընդ քեզ, կամ զի՞նչ
ձայն ածէ, կամ զիա՞րդ ունի զանձն: *15* Ասէ արքայն. Իբրեւ զմի ի ծառայիցն
իմոց համարի զինքն, հող ոտից իմոց ջանայ լինել: *16* Ասեն նոքա. Առ[2] արա
զոր ասեմքս քեզ. պահեա դու զնոսա աստէն, եւ առաքեա դու դեսպանս յեր-
կիրն Հայոց, եւ տուր բերել անտի հող ի սահմանացն Հայոց իբրեւ բեռինս
երկուս, եւ կահոյր մի ջուր: *17* Եւ հրաման տացես հարկանել զկէս խորանի
յատակ ի բերեալ հողոյն Հայոց. եւ առցես քեզէն զձեռանէ արքային Հայոց
Արշակայ, եւ տարցես նախ յայն տեղ՝ որ բնակ իսկ իցէ հողն. եւ հարցցես
ցնա բանս: *18* Եւ դարձեալ առցես դու զձեռանէ նորա, եւ տարցես ի հայա-
տակսն ի հարեալ հողոյն. եւ լուիցես դու բանս ի նմանէ, եւ ապա գիտասցես
դու՝ եթէ կա՞յ յուխտի քո եւ պահէ՞ զդաշինս քո թէ ոչ՝ յետ արձակելոյ քո զնա

1 *Յօրինակի միում պակասէ հատուածդ՝* Ահաւասիկ բանք... զոր ասէրն
2 *Օրինակ մի՝* ասեն նոքա արքային. Արա